# ԱրՊՀ-ՈՒՄ ԿԳՈՐԾԻ «ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ»-Ը

*Հոկտեմբերի 8-ին Արցախի պետական համալսարանի պատմության և քաղաքագիտության ամբիոնի նախաձեռնությամբ կայացել է հանդիպում ուսանողների հետ: Հանդիպման առանցքային նպատակն էր ուսանողների հետ համալսարանում «Պատմաբանների ակումբ» բացելու հարցի քննարկումն ու հարցի վերաբերյալ համատեղ որոշում կայացնելը: Հանդիպմանը ներկա էին ֆակուլտետի դեկան Ա. Խաչատրյանը, ամբիոնից դասախոսներ և ուսանողներ:*



Պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Ն. Սարումյանի խոսքով՝ տեղեկատվական դաշտում առկա խեղաթյուրումների դեմ պայքարելու միջոց կարող է հանդիսանալ ակումբի հետագա գործունեությունը:

«Ակումբի շրջանակներում ձեզնից յուրաքանչյուրը, Արցախի բռնազավթված բնակավայրերի, իր հայրենի գյուղի, պատմամշակութային վայրերի և կոթողների մասին հոդված գրելով, իր ներդրումը կունենա տեղեկատվական դաշտում առկա պայքարում հաղթանակ ունենալուն: Մեր ծավալած գործունեությունը աշխարհին պիտի ապացուցի, որ Արցախը հայկական է»,- նշել է Ն. Սարումյանը՝ հավելելով, որ ակումբի գործունեությունը հայրենասիրական և ազգապահպան նպատակ է հետապնդելու:

Հանդիպման ընթացքում, ուսանողների միաձայն որոշմամբ, հավանության է արժանացել «Պատմաբանների ակումբ» ունենալու առաջարկը: Այսուհետ ԱրՊՀ-ում կգործի «Պատմաբանների ակումբ»-ը, որը, ըստ Ն. Սարումյանի, ակտիվ գործունեություն է ծավալելու սոցիալական ցանցերում՝ պատմական փաստերը տարբեր լեզուներով աշխարհին ներկայացնելու նպատակով:

# ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆՈՒՄ



*Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում դասախոսությամբ հանդես է եկել CERGE-EI-ի ասպիրանտ, ԳԴՀ Կենտրոնական բանկի հետազոտական կենտրոնի գիտաշխատող Գեղեցիկ Աֆունցը:Հանդիպմանը ներկա էին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:*

Ֆակուլտետի դեկան Ռ. Մանգասարյանը, ողջունելով կամավորական հիմունքներով իրականացված նախաձեռնությունը, հույս է հայտնել, որ համագործակցությունը ցանկալի արդյունք կտա: Գ. Աֆունցը ուսանողներին ներկայացրեց իր հետազոտական աշխատանքներից մեկը, նաև խոսեց առկա համագործակցության մասին, ըստ որի հաջորդ ուսումնական տարվա ընթացքում նույն ծրագրի շրջանակներում ֆակուլտետի ուսանողները հնարավորություն կունենան մասնակցել արտերկրի առաջատար բուհերի դասընթացների հեռավար եղանակով:




«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ամսաթերթ

Հիմնադիր՝
«ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝
Զարինե Սառաջյան

Մեր հասցեն՝
Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:

Այցելի՛ր asu.am կայք:

www.asu.am



# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 07(235)
հոկտեմբեր - 2021


# ԿԱՅԱՑՎԵՑ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ

*Հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) Հավատարմագրման հանձնաժողովի նիստ: Օրակարգում Արցախի պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրումն էր:*




Հավատարմագրման հանձնաժողովը քննարկեց փորձագետների զեկույցները հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ, դիտարկեց դրական և բացասական գնահատված տիրույթները, փորձագետների մատնանշած ուժեղ և թույլ կողմերը, հնարավոր ռիսկերը: Քննարկվեց նաև, թե որքանով են իրատեսական բուհի բարելավման ծրագրերը:Հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ՝ Արցախի պետական համալսարանին շնորհվեց ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 տարի ժամկետով:

# ԵՊՀ-Ի ԵՎ ԱրՊՀ-Ի ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ



*ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը հոկտեմբերի 13-ից 15-ը աշխատանքային այցով ՀՀ-ում էր: Այցի ընթացքում ռեկտորը մի շարք հանդիպումներ է ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանի, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանի, ԵՊՀ ղեկավարության հետ, մասնակցել ՀԲԸՄ ընդունելությանը, որը կազմակերպվել էր ի նշանավորումն Հայաստանի անկախության 30-ամյակի: Հանդիպումների ընթացքում քննարկվել են Արցախի պետական համալսարանում բարձրագույն կրթության և գիտության զարգացմանը վերաբերող հարցեր:*

→ 2 ԵՊՀ ռեկտորի ժ.պ. Հովհաննես Հովհաննիսյանը և Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը հոկտեմբերի 15-ին ԵՊՀ-ում ստորագրել են երկու բուհերի միջև համագործակցության նոր պայմանագիր` զարգացնելու կրթական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական ոլորտներում առկա փոխգործակցությունը:

Ըստ նոր կնքված պայմանագրի` երկու բուհերը մշակելու և կյանքի են կոչելու համատեղ ծրագրեր, իրականացնելու են դասախոսների և ուսանողների ակադեմիական փոխանակում, կազմակերպելու են տեղեկատվական ու մշակութային միջոցառումներ:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, կարևորելով պայմանագրի ստորագրումը, նշել է, որ Երևանի պետական համալսարանը ոչ միայն Հայաստանի, այլև ողջ հայության Մայր բուհն է, և պատահական չէ, որ 51-ամյա ԱրՊՀ-ն առ այսօր զգում է ԵՊՀ-ի աջակցության կարիքը:

Նա տեղեկացրեց, որ երկու բուհերի միջև համագործակցության հուշագիր կնքվել էր դեռևս 2014 թվականին 5 տարի ժամկետով. «Հաշվի առնելով համավարակը, այնուհետև 44-օրյա պատերազմը` նոր պայմանագիր կնքելու հնարավորություն չէր ստեղծվել: Այսօր արդեն այն իրողություն է»:

ԵՊՀ ռեկտորի ժ.պ. Հովհաննես Հովհաննիսյանն էլ փաստեց, որ Մայր բուհը կանգնել ու մշտապես կանգնած է լինելու Արցախի և Արցախի պետական համալսարանի կողքին. «Մեր միջև առկա կապերն ամուր են, բայց մենք դրանք էլ ավելի կամրացնենք` ցույց տալու բոլորին, որ մենք կանք և կլինենք»:

Կնքված նոր պայմանագրի արդյունքում ԵՊՀ-ն տրամադրելու է գիտական, մասնագիտական գրականություն, պարբերականներ և այլ նյութեր, աջակցելու է ԱրՊՀ մասնագետների պատրաստման, պրոֆեսորադասախոսական կազմի համալրման, ատենախոսությունների պաշտպանության, ֆակուլտետների և ամբիոնների փոխգործակցության կազմակերպման գործընթացներին և այլ աշխատանքներին: ԱրՊՀ ռեկտորի աշխատանքային հանդիպումները գիտակրթական հաստատությունների պատասխանատուների հետ շարունակվելու են` ԱրՊՀ համագործակցային շրջանակներն ընդլայնելու, բարձրագույն կրթության շարունակական բարելավման ու զարգացման նպատակով:

## ԱրՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀՊՄՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ



*ՀՊՄՀ-ում հոկտեմբերի 7-ին մեկնարկել էր «Մաթեմատիկական կրթություն» խորագրով երկօրյա միջազգային գիտաժողովը, որին մասնակցում էին հայաստանյան, Արցախի և ՌԴ բուհերի մի շարք ներկայացուցիչներ, ուսուցիչներ` տարբեր դպրոցներից:*

ՀՊՄՀ-ի ռեկտորի պաշտոնակատար Աշոտ Խոեցյանը ողջունեց գիտաժողովի մասնակիցներին և մաղթեց արդյունավետ աշխատանք` կարևորելով միջազգային գործընկեր բուհերի ներկայացուցիչների մասնակցությունը: Պրոֆեսոր Խոեցյանն առանձնակի կարևորեց ֆիզիկամաթեմատիկական ուղղվածությամբ աշխատանքների կարևորությունը, քանի որ բնագիտական առարկաների հանդեպ հասարակության հետաքրքրությունը նկատելի անկում է ապրել:

Արցախի պետական համալսարանից գիտաժողովին մասնակցել եւ զեկուցմամբ հանդես են եկել մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի դասախոս, ֆ.մ.գ.թ., դոցենտ Լիանա Աբրահամյանը, ուսանողուհիներ Սյուզաննա Ղահրամանյանը և Անուշ Բաբայանը:



## ՔՆՆԱՐԿՈՒՄ` ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ



*Հոգեկան առողջության միջազգային օրվա առթիվ հոկտեմբերի 11-ին Արցախի պետական համալսարանում մանկավարժության և հոգեբանության ամբիոնի և հոգեբանական կենտրոնի համատեղ ջանքերով կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում` նվիրված հետպատերազմյան իրավիճակում հասարակության շրջանում տեղ գտած անորոշության ու տագնապի զգացումների վերլուծությանը: Կլոր սեղան-քննարկմանը ներկա էին ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր, h.գ.թ., դոցենտ Վ. Յարամիշյանը, մանկավարժության և սպորտի ֆակուլտետից դասախոսներ և հոգեբան-մասնագետներ ԱՀ-ից ու ՀՀ-ից:*

1922թ. հոկտեմբերի 10-ից միջազգայնորեն և ՀՀ-ում ընդունված օրենսդրական ակտերի համաձայն օրը նշվում է որպես հոգեկան առողջության միջազգային օր` նպատակ ունենալով հոգեկան խնդիրներ ունեցող անձանց ներգրավել առողջ մարդկանց հասարակության մեջ:

ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր, h.գ.թ., դոցենտ Վ. Յարամիշյանը, ողջունելով և ներկայացնելով քննարկման թեման ու մասնակիցներին, նշել է, որ նման ձևաչափով քննարկում կազմակերպելը հետպատերազմյան իրականությունում կարևոր անհրաժեշտություն է:

«Հոգեկան առողջության միջազգային օրը պարզապես անհրաժեշտություն է, որպեսզի նրանք, ովքեր ունեն հոգեկան խնդիրներ, իրենց զգան պաշտպանված և հասարակության մյուս անդամների հետ լինեն հավասար պայմաններում: Քննարկման նպատակն է հասկանալու և վերլուծելու այն խնդիրները, որոնք առկա են մեր հասարակությունում` առաջարկելով նաև ուղիներ այս իրավիճակի հաղթահարման ուղղությամբ»,- նշել է Վ. Յարամիշյանը:

Հ.գ.թ., պրոֆեսոր Ա.Մխիթարյանը, կարևորելով նախաձեռնության անհրաժեշտությունը, նշել է, որ մտահոգ լինել քաղաքացիների հոգեկան առողջության համար և ունենալ տեսլական, թե այս խիստ անորոշության մեջ ինչ հոգեվիճակում է գտնվում մեր հասարակությունը, շատ տեղին է և պահանջված:

«Ստեղծված անորոշությունը քայքայում է մեր հոգեկան աշխարհը, հասարակության փոխհարաբերությունների նորմալ հարմոնիան: Մենք` արցախցիներս, պետք է ունենանք յուրահատուկ առաջարկներ, քանի որ մենք անմիջապես ապրում ենք և՛ այդ անորոշությունը, և՛ այդ վտանգները, և՛ տագնապները, որոնք հետագայում փոխակերպվում են վախի և երանգավորում են մեր ողջ գործունեությունը»,- իր խոսքում նշել է Ա. Մխիթարյանը` հորդորելով ինքներս մեր մեջ ուժ գտնել և նայել ապագային, դուրս գալ անորոշության իրավիճակից և հասկանալ, որ մեր ձեռքերում է մեր ճակատագիրը:

ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ավագ դասախոս Ա. Ավանեսյանը ներկայացրել է անորոշության զգացման և հոգեկան առողջության միջև եղած փոխհարաբերությունները` խոսելով նաև հոգեկան առողջության չափորոշիչներից, հոգեբանական հայեցակարգերից և անորոշության զգացումի հաղթահարման մեթոդներից:

«Այսօր Արցախում ապրողներիս մոտ առկա անորոշությունը բացասական բնույթ ունի և բնակչության հոգեկան կայուն առողջությունը վտանգի տակ է առնված, որովհետև սեփական պոտենցիալը իրագործելու հանգամանքը ոչ բոլորի մոտ է ստացվում և կենսական սթրեսները շատ ավելի խորն են ապրվում բնակչության մոտ»,- նշել է Ա.Ավանեսյանը:

Ելույթներով հանդես են եկել նաև մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոսներ:

# ԱրՊՀ-ՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՐՏԵՄ ՕՀԱՆՈՎԸ



*Հոկտեմբերի 27-ին ԱրՊՀ է այցելել հայազգի անվանի գիտնական, տեխնիկական և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտեմ Օհանովը, ով աշխարհին առավել հայտնի է նոր նյութերի կառուցվածքի համակարգչային դիզայնի մեթոդների և բյուրեղային կառուցվածքների ստեղծման ու գիտության հանրայնացման աշխատանքներով:*

Անվանի գիտնականին նախ ընդունել է ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը: Ողջունելով հյուրին՝ ռեկտոր Ա. Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Ա. Օհանովին Արցախի պետական համալսարան այցելելու համար՝ բարձր գնահատելով նրա ներդրումը գիտության ոլորտում: Հանդիպման ընթացքում քննարկվել են բարձրագույն կրթության բնագավառում բնագիտական ուղղության մասնագիտությունների զարգացմանը վերաբերող հարցեր:

«Մեզ համար մեծ պատիվ է մեր համալսարանում հյուրընկալել աշխարհահռչակ այնպիսի գիտնականի, ինչպիսին Արտեմ Օհանովն է»,-նշել է Ա. Սարգսյանը:

Արտեմ Օհանովն իր հերթին պատրաստակամություն է հայտնել մասնագիտական աջակցություն ցուցաբերելու ԱրՊՀ-ին:

Ռեկտորի հետ հանդիպումից հետո գիտնականը ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի ուսանողների և դասախոսների համար հանդես է եկել «21-րդ դարի մարտահրավերները բյուրեղագիտության ոլոր-

# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է «ՃԱՆԱՉԻՐ ԱՐՑԱԽԸ» ԾՐԱԳԻՐԸ

*Հոկտեմբերի 9-ին Արցախի պետական համալսարանի շուրջ 120 ուսանող «Ճանաչիր Արցախը» պատմաճանաչողական արշավների ծրագրի շրջանակում այցելել է Գանձասարի վանական համալիր: Այս անգամ ծրագրին ընդգրկվել են պատմության և իրավագիտության, բնագիտական և տնտեսագիտության ֆակուլտետների առաջին կուրսերի ուսանողները՝ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտորի, ֆակուլտետների դեկանների և մի խումբ դասախոսների ուղեկցությամբ:*



Առաջին կուրսում սովորող ուսանողները Գանձասարի Մ. Մաշտոցի անվան մատենադարանում ստացել են իրենց ուսանողական տոմսերն ու ստուգման գրքույկները:

Ծրագիրը շարունակական բնույթ կկրի՝ ընդգրկելով ավելի շատ մասնակիցների:



# ԱրՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ ԵՊՀ-ՈՒՄ



*Հոկտեմբերի 15-ին ԵՊՀ-ում մեկնարկել է փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ընդհանուր հոգեբանության ամբիոնի կազմակերպած «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնահարցերը» խորագրով միջազգային 8-րդ գիտաժողովը, որը շարունակվել է մինչև հոկտեմբերի 17-ը:*

Միջազգային գիտաժողովին ներկա էին ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Էլինա Ասրիյանը, ԵՊՀ գիտական քարտուղար Լևոն Հովսեփյանը, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան Ալեքսան Բաղդասարյանը, Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ Հրանտ Ավանեսյանը, Արցախի պետական համալսարանի պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, հյուրեր:

Գիտաժողովի մեկնարկին բացման հանդիսավոր խոսքով հանդես եկավ ԵՊՀ Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ Հրանտ Ավանեսյանը, որը, ողջունելով և բարի գալուստ մաղթելով ներկաներին, առանձնահատուկ կարևորեց օտարերկրյա մասնակիցների այցը Հայաստան նմանատիպ բարդ, համաճարակային պայմաններում:

Նա շնորհակալություն հայտնեց միջազգային գիտաժողովի՝ 11 երկրից ժամանած մասնակիցներին, ինչպես նաև համալսարանի ղեկավարությանը գիտաժողովին ցուցաբերած աջակցության համար՝ հավելելով, որ մասնակիցների զեկուցումները լույս են տեսնելու առանձին հավաքածուով:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց նաև Արցախի պետական համալսարանի պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, որն առանձնահատուկ շեշտեց, որ հայ հոգեբանների ողջ ուշադրությունն ու աջակցությունը թե՛ պատերազմի ընթացքում և թե՛ դրանից հետո սևեռված են եղել այն բոլոր խնդիրների վրա, որոնք առնչվել են Արցախին:

Բացման հանդիսավոր արարողությունից հետո գիտաժողովի մասնակիցները հանդես եկան տարբեր զեկուցումներով՝ անդրադառնալով հայ և ռուս ուսանողների հոգեբանական առողջության առանձնահատկություններին ու խնդիրներին, երեխաների տրավմատիկ հիշողությունների ուսումնասիրություններին, ինչպես նաև հետպատերազմյան շրջանում հայ հասարակության շրջանում տեղ գտած հոգեբանական խնդիրներին:

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանը հանդես է եկել «Հետպատերազմյան շրջանում բարձրագույն կրթության շարունակականության ապահովման հոգեբանական գործոնները /Արցախի օրինակով/» թեմայով զեկուցումով:

# ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ



*Հոկտեմբերի 4-ից 8-ը ԵՊՀ Ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 30-ամյակին:*

Գիտաժողովին իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել նաև ԱրՊՀ ուսանողները. Սոնա Մուսայելյանը, Հերմինե Արզումանյանը, Անահիտ Հովհաննիսյանը՝ բանասիրական ֆակուլտետից, Մարիամ Մինասյանը՝ բնագիտական ֆակուլտետից, Մարիա Մինասյանը, Արևիկ Պետրոսյանը, Դիանա Դանիելյանը, Անգելինա Նասիբյանը, Վահագն Խաչատրյանը՝ տնտեսագիտության ֆակուլտետից, Մարիամ Առստամյանը, Մարիամ Աղաբաբյանը՝ մանկավարժության և սպորտի ֆակուլտետից:

Ուսանողների խոսքով՝ նման միջոցառումները կարևորվում են հատկապես նրանով, որ նպաստում են փորձի փոխանակմանը, առավելությունների և թերությունների արձանագրմանը, նոր ծանոթությունների ձևավորմանը, համագործակցության ամրապնդմանը:

«Ուրախ եմ, որ մասնակցություն ունեցանք այս գիտաժողովին, քանի որ այն մեզ հնարավորություն տվեց փորձելու մեր ուժերը գիտության ոլորտում, ներկայացնելու մեր ինքնուրույն մտքերը և լսելու ուրիշներին, ինչպես նաև իմանալու մեր գիտական խոսքի ու մտքի թույլ և ուժեղ կողմերը»,-իր տպավորություններն է կիսել մասնակիցներից Հերմինե Արզումանյանը:

Ուսանողուհի Անահիտ Հովհաննիսյանը, ով առաջին անգամ էր մասնակցում գիտաժողովի, նշել է. «Այս գիտաժողովը ինձ օգնեց հասկանալ, որ եթե մի բանի շատ ես ձգտում ու հավատում ես սեփական ուժերիդ, ապա անպայման հասնում ես դրան: Նաև ոգևորիչ էր նշանավոր լեզվաբան Յու. Ավետիսյանի կարծիքը հոդվածիս վերաբերյալ: Վստահ եմ, դեռ մեծ գործեր ենք անելու գիտության ասպարեզում»:

Բնագիտական ֆակուլտետից Մարիա Մինասյանը ևս կիսվել է իր տպավորություններով՝ նշելով. «Նման միջոցառումները հնարավորություն են տալիս քո խոսքը ներկայացնել մեծ դահլիճին, որը ինքնակատարելագործման ուղիներից մեկն է»:

Գիտաժողովի ընթացքում ԱրՊՀ ուսանողուհի Սոնա Մուսայելյանն արժանացել է լավագույն զեկուցող անվանակարգին գրականագիտության և լեզվաբանության բաժանմունքում:

«Գիտաժողովն առանձնանում էր իր կազմակերպվածությամբ ու գիտական բարձր մակարդակով: Մեր ելույթները լսում ու դիտարկումներ էին անում այնպիսի նշանավոր գրականագետներ ու լեզվաբաններ, ինչպիսիք են Աշխեն Ջրբաշյանը, Նվարդ Վարդանյանը և Յուրի Ավետիսյանը:

Հաճելիորեն մեծ հպարտություն է ինձ համար և մեծ պատասխանատվություն լավագույն զեկուցող ճանաչվելը: Շնորհակալ ենք ԱրՊՀ ղեկավարությանը նման հնարավորություն տալու համար, ԵՊՀ ՈՒԳԸ կազմին՝ բարձր մակարդակի և կայացած միջոցառման համար, առանձնահատուկ շնորհակալություն ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ՈւԳԸ նախագահին ու կազմին՝ ջերմ ընդունելության համար»,- նշել է Սոնա Մուսայելյանը:



# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

*Հոկտեմբերի 28-ին տեղի է ունեցել տնտեսագիտության ֆակուլտետի մեծ խորհրդի նիստը, որի ընթացքում դեկան Ռուզաննա Մանգասարյանը ներկայացրել է 2020-2021 ուստարում ֆակուլտետի կատարած աշխատանքի մասին հաշվետվություն: Նիստին ներկա էին ռեկտոր Արմեն Սարգսյանը, պրոռեկտորներ, խորհրդի անդամներ:*



Նիստը մեկնարկել է մեկ րոպե լռությամբ՝ ի հիշատակ նահատակված ուսանողների:

«2020-21 ուս. տարին լի էր մարտահրավերներով՝ պայմանավորված չարաբաստիկ պատերազմով: ԱրՊՀ-ն ունեցավ 26-զոհ, որից 3-ը տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողներ էին. Արթուր Արմենի Ասրյան (ֆինանսներ 2-րդ կուրս), Գևորգ Արմենի Առստամյան (զբոսաշրջություն 2-րդ կուրս), Միքայել Մանվելի Առստամյան (ֆինանսներ 1-ին կուրս)»,-նշել է Ռ. Մանգասարյանը:

Դեկանը ներկայացրել է ֆակուլտետի գործունեությունը՝ անդրադառնալով ուսումնական գործընթացին, գիտահետազոտական և ուսանողների հետ տարվող բարոյա-հոգեբանական աշխատանքներին:

«Ֆակուլտետում հետևողական աշխատանքներ են իրականացվել ուսումնական գործընթացի բարելավման, գիտահետազոտական գործունեության ընդլայնման, ուսանողական միջոցառումների ակտիվացման ուղղություններով: Աշխատանքներ են տարվել «Տնտեսագիտության ֆակուլտետի ռազմավարությամբ» նախատեսված խնդիրների իրացման համար: Համաձայն որի ֆակուլտետի առաքելությունը աշխատանքի շուկայի պահանջարկին համահունչ, մասնագիտական գիտելիքներով և հմտություններով մրցունակ, գիտելիքահենք տնտեսության կայացմանն աջակցող բակալավրում՝ «Ֆինանսներ /ըստ ոլորտի/», «Հաշվապահական հաշվառում և հարկում», «Կառավարում» «Զբոսաշրջություն», մագիստրատուրայում՝ «Ֆինանսներ», «Կառավարում» մասնագիտությունների գծով մասնագետների պատրաստումն է»,-նշել է դեկանը:

Նրա խոսքով՝ 2020-2021 ուստարում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը կատարել է իր պարտականությունները ուսումնագիտական աշխատանքների գծով՝ ցուցաբերելով անհրաժեշտ աշխատանքային կարգապահություն: Ֆակուլտետի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 16 475 ժամ, որի իրականացման վերահսկողությունը կատարվել է դեկանի և ամբիոնների վարիչների կողմից: Որպես ֆակուլտետի գործունեության ուժեղ կողմեր դեկանը առանձնացրել է արդյունավետ աշխատանքների և կարգապահության ամրապնդումը, գիտահետազոտական միջոցառումներին ուսանողների պատշաճ մակարդակով մասնակցության ապահովումը, ՄԿՕ-ներում ներառված դասընթացներից ստացված գիտելիքների ամփոփումը գիտական ընթերցումներով:

Դեկանը, խոսելով առաջիկա անելիքներից, կարևորել է դասախոսների կողմից մենագրությունների, ուսումնական ձեռնարկների, հոդվածների տպագրության աճը, հանրապետությունից դուրս վերապատրաստման դասընթացների կազմակերպումը, դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման ժամանակակից կրթափորձի մշտապես ուսումնասիրությունը:

Դեկանի աշխատանքը գնահատող ելույթներով հանդես են եկել ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը՝ բարձր գնահատելով կատարված աշխատանքը:

Կատարված աշխատանքը գնահատվել է բավարար: Ռեկտորը շնորհակալություն է հայտնել ֆակուլտետի համակազմին՝ հետպատերազմյան շրջանում իրականացրած արդյունավետ աշխատանքի համար:

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

*Հոկտեմբերի 29-ին տեղի է ունեցել պատմության և իրավագիտության ֆակուլտետի մեծ խորհրդի նիստը, որի ընթացքում դեկան Արմինե Խաչատրյանը ներկայացրել է 2020-2021 ուստարում ֆակուլտետի կատարած աշխատանքի մասին հաշվետվություն: Նիստին ներկա էին ռեկտոր Արմեն Սարգսյանը, պրոռեկտորներ, խորհրդի անդամներ:*



Նիստը մեկնարկել է մեկ րոպե լռությամբ՝ ի հիշատակ պատերազմում նահատակված ուսանողների: Պատմության և իրավագիտության ֆակուլտետում գործում են 3 ամբիոններ՝ պատմության և քաղաքագիտության, իրավունքի, կերպարվեստի: Ֆակուլտետի դասախոսները տպագրել են հոդվածներ, մենագրություններ, մասնակցություն հանդես բերել միջազգային գիտաժողովների:

Դեկանի խոսքով՝ պատմության և քաղաքագիտության ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները և ուսումնական դասընթացները ծավալել և այժմ էլ ծավալում է հայոց պատմության, ազգագրության, հնագիտության և ընդհանուր պատմության մի շարք հիմնախնդիրների ուսումնասիրության և պատմության դասավանդման մեթոդիկայի ուղղությամբ:

Իրավունքի ամբիոնն իր գիտական ուսումնասիրություններն ու ուսումնական դասընթացները ծավալել է սահմանադրական, վարչական, քրեական, քաղաքացիական իրավունքի, դատավարության ուղղություններով:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավունքի ամբիոնը շարունակել է համագործակցել ՀՀ առաջատար բուհերի հետ: Ամբիոնի դասախոս Տաթևիկ Գևորգյանը Երևանի պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն ԺԲ.00.05 մասնագիտությամբ:

Կերպարվեստի ամբիոնում իրականացվել է ակադեմիական հաջողված աշխատանքների ցուցադրում (գծանկար, գունանկար, կոմպոզիցիա), դասախոսների աշխատանքների ցուցադրում բաժնի ուսանողներին: Կատարվել են թեմատիկ աշխատանքներ՝ նվիրված ԱրՊՀ 50-ամյակին (գրաֆիկա, քանդակ, գունանկար): Կազմակերպվել են միասնական ցուցահանդեսներ:

Դեկան Ա. Խաչատրյանը ներկայացրել է նաև ֆակուլտետում կատարված ուսումնամեթոդական աշխատանքները, ուսանողների գիտական աշխատանքը, դաստիարակչական ու կրթական, ժամանցի ուղղությամբ կատարված միջոցառումները: Խոսելով ֆակուլտետի ուժեղ և թույլ կողմերի մասին՝ Ա. Խաչատրյանը նշել է. «Ֆակուլտետի ուժեղ կողմը մեր գնահատմամբ ուսանող- դասախոս-ամբիոն-դեկանատ փոխհամագործակցության ամուր հենքն է, ուսանողների ներգրավվածությունը համալսարանական, արտահամալսարանական միջոցառումներին, ուսման գործընթացի բարելավմանը: Թույլ կողմը՝ փոխադարձ դասալսումների և քննարկումների, առաջավոր մանկավարժական փորձի ներդրման ոչ բավարար մակարդակը»:

Հաշվետվությունը գնահատող ելույթներով հանդես են եկել ֆակուլտետի դասախոսներ:

Խորհուրդը պատմության և իրավագիտության ֆակուլտետի 2020-2021 ուստարում կատարած աշխատանքը գնահատել է բավարար:



# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ



*Հոկտեմբերի 12-ին տեղի է ունեցել ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի մեծ խորհրդի նիստ, որի ընթացքում ֆակուլտետի դեկան, ք.գ.թ., պրոֆեսոր Վոլոդյա Միրզոյանը ներկայացրել է 2020-2021 ուսումնական տարվա հաշվետվությունը: Նիստին ներկա էին ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ֆակուլտետի խորհրդի անդամները:*

Միջոցառումը մեկնարկել է մեկ րոպե լռությամբ՝ ի հիշատակ Արցախյան պատերազմներում անմահացած տղաների:

Դեկանը ներկայացրել է հաշվետու տարում ֆակուլտետում տարբեր ուղղություններով կատարած միջոցառումները՝ ուսումնական գործընթաց, գիտահետազոտական, կազմակերպչական և ուսանողների հետ տարվող աշխատանքներ:

«Յուրաքանչյուր տարի մեր աշխատանքը կատարվում է ըստ ֆակուլտետի խորհրդի կողմից ընդունված և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից հաստատված ծրագրով, ինչպես նաև բնագիտական ֆակուլտետի ռազմավարության շրջանակներում:

Բնագիտական ֆակուլտետի առաքելությունը՝ մասնագիտական գիտելիքներով և հմտություններով, մրցունակ, համամարդկային արժեքները ճանաչող, ազգայինը կարևորող, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի արհեստավարժ մասնագետների պատրաստումն է»,- նշել է Վ. Միրզոյանը:

Նա ներկայացրել է նաև բնագիտական ֆակուլտետի տեսլականը և ընդգծել, որ բոլոր ծրագրերը միտված են հասնելու այդ տեսլականին, այն է՝ բարձրացնել ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը, նպաստել ֆակուլտետի մրցունակության բարձրացմանը, ապահովել կրթական բարձրորակ մշակույթի ձևավորումը, մատուցվող կրթական ծառայությունների համապատասխանությունը և համադրելիությունը միջազգային չափանիշների:

Բնագիտական ֆակուլտետի շրջանավարտը պետք է լինի համակողմանի զարգացած, պետական մտածելակերպով օժտված քաղաքացի և հարգի պետական խորհրդանիշները:

Բնագիտական ֆակուլտետը հաշվետու տարում մասնագետ է թողարկել առկա բաժնի հինգ, հեռակա բաժնի չորս, ինչպես նաև ութ մագիստրոսական կրթական ծրագրերով:

2020-2021 ուս.տարում ֆակուլտետի ամբիոնների կողմից կատարված աշխատանքների մասին խոսելով՝ դեկանն առանձնացրել է դրանք՝ ըստ ամբիոնների. կազմակերպվել են ինտելեկտուալ խաղեր, գիտական սեմինարներ, արշավներ, արտալսարանային դասընթացներ և այլն, որոնք միտված են եղել ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Հաշվետվությունը գնահատող ելույթներով հանդես են եկել ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, պրոռեկտոր Գեորգի Սահակյանը, ֆակուլտետի դասախոսներ: Բնագիտական ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա հաշվետվությունը գնահատվել է բավարար:

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ



***Հոկտեմբերի 15-ին հրավիրվել է բանասիրական ֆակուլտետի մեծ խորհրդի նիստ, որի ընթացքում բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Մարգարյանը ներկայացրել է 2020-2021 ուսումնական տարում ֆակուլտետի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը:***

Դեկան Լ.Մարգարյանը ներկայացրել է հաշվետու տարում ֆակուլտետի կառուցվածքն ու նրա կառավարման համակարգը, կրթական և ուսումնամեթոդական գործունեության կազմակերպումը, դասախոսական կազմի և ուսանողության կատարած գիտական աշխատանքը, համագործակցությունը և ինքնավերլուծությունը՝ ուժեղ ու թույլ կողմերով: 2020-2021 ուսումնական տարում ֆակուլտետում ուսումնագիտական գործունեությունը շարունակվել է իրականացվել 4 ամբիոններում՝ Ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի, ռոմանագերմանական լեզուների, գրականության և լրագրության, ռուսաց լեզվի և գրականության: Ֆակուլտետի ամբիոններում 2020-2021 ուստարվա ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել էր 44854 ակադեմիական ժամ:

Բնութագրելով ուսումնամեթոդական գործունեությունը՝ դեկան Լ. Մարգարյանը նշել է, որ հաշվետու տարին շրջադարձային տարի էր. անկումային՝ արտահամալսարանական իրականությամբ պայմանավորված, վերելքային՝ համալսարանական աշխատանքների գնահատման բարձր նիշով՝ հավատարմագրումը պատվով իրականացնելու հանգամանքով պայմանավորված: Մեկնարկին ուսումնականը հատկանշվեց ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի փուլերը հաջողությամբ անցնելու նախապատրաստական բուռն աշխատանքներով: Ներդրվեց էլեկտրոնային Classroom հարթակը, մշակվեց հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացը կազմակերպելու կարգը: Էլեկտրոնային հարթակ մուտքագրվեցին առարկայական նկարագրերը, ուսումնական նյութերը՝ դրանք հասանելի դարձնելով առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողներին:

«Ինչպես Արցախյան առաջին պատերազմի օրերին ԱրՊՀ-ն իր կարևոր առաքելությանը հավատարիմ մնաց ու դարձավ Արցախի լինելության խորհրդանիշներից մեկը, այնպես էլ Երրորդ պատերազմից հետո խելամիտ կառավարման արդյունքում ոչ միայն արագ ինքնակազմակերպվեց, դարձավ Արցախի կյանքի շարունակականությունը համախմբող կառույց, այլև ուսանողությանը ներկայացավ իր առաքելության իրականացմանը հաստատ մնալու կամքով»,-ընդգծել է Լուսինե Մարգարյանը:

Հաշվետու տարում աշխատանքներ են տարվել կադրային ներուժի զարգացման ուղղությամբ, կազմակերպվել արտալսարանային միջոցառումներ, որոնք միտված են եղել գիտակրթական արդյունավետության բարելավմանը:

ԱրՊՀ պրոռեկտոր Գ.Սահակյանը գոհունակություն է հայտնել կատարված աշխատանքից՝ կարևորելով միջազգային հեղինակություն ունեցող գիտական պարբերականներում գիտական հոդվածներ տպագրելու անհրաժեշտությունը:

«Մեր խնդիրն է այսօր իրականացնել «միջազգայնացում տանը» առցանց հնարավորությունները օգտագործելով՝ հնարավոր բոլոր միջոցներով ներգրավվել Արցախից դուրս առկա իրականությանը ինտեգրվելու»,-նշել է Լուսինե Մարգարյանը:

2020-2021 ուսումնական տարում ֆակուլտետի կատարած աշխատանքները նիստը գնահատել է բավարար:



# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ



***Հոկտեմբերի 22-ին տեղի է ունեցել ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի մեծ խորհրդի նիստ, որի ընթացքում ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը ներկայացրել է 2020-2021 ուսումնական տարվա հաշվետվությունը: Նիստին ներկա էին ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, պրոռեկտորներ, ֆակուլտետի խորհրդի անդամները:***

Միջոցառումը մեկնարկել է մեկ րոպե լռությամբ՝ ի հիշատակ Արցախյան բոլոր պատերազմներում անմահացած հերոսների:

Դեկանը ներկայացրել է հաշվետու տարում ֆակուլտետում տարբեր ուղղություններով կատարած աշխատանքները՝ ուսումնական գործընթաց, գիտահետազոտական, կազմակերպչական և ուսանողների հետ տարվող աշխատանքներ:

«44-օրյա պատերազմը խաթարեց մեր բնականոն կյանքը, մեր ուսումնական գործընթացը, մեր հայրենիքում մեր ապրելու իրավունքը: Ֆակուլտետի առկա և հեռակա համակարգերի 114 ուսանողներ կամ ուսանողների 25%-ը պատերազմի հետևանքով տեղահանվել են իրենց մշտական բնակավայրերից, 10-ից ավելին ունեցել են տարբեր ծանրության վիրավորումներ: Տասնյակ ուսանողներ կորցրել են ծնողին, եղբորը, հարազատին»,-նշել է Շ. Այդինյանը՝ հավելելով, որ համալսարանի ղեկավարության կողմից առաջադրվեցին հստակ պահանջներ՝ պարապմունքները վերսկսելու, ուսանողների շրջանում բացատրական, բարոյահոգեբանական լայն աշխատանք ծավալելու ուղղությամբ: Բնութագրելով կրթական գործունեության կազմակերպումը՝ դեկան Շ. Այդինյանը նշել է, որ 2020-21 ուստարում մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ուսուցման առկա համակարգում բակալավրիական 4 կրթական ծրագրերի ուղղությամբ ձևավորվել էր 15 խումբ՝ 213 ուսանող թվակազմով և մագիստրոսական 3 կրթական ծրագրերի ուղղությամբ 5 խումբ՝ 43 ուսանող: Հեռակա ուսուցման համակարգի բակալավրիատում ուսուցումը իրականացվել է 4 կրթական ծրագրերի 12 խմբերում, սովորողների թիվը՝ 198: Մագիստրատուրայում ունեցել ենք 1 խումբ՝ 6 ուսանող թվաքանակով:

Ընդհանուր առմամբ ֆակուլտետը բակալավրիատի 4 և մագիստրատուրայի 3 կրթական ծրագրերի ուղղությամբ թողարկել է 117 շրջանավարտ, որոնցից 8-ը գերազանցությամբ:

Խոսելով ուսանողների հետ տարվող աշխատանքների և արտահամալսարանական գործունեության մասին՝ Շ. Այդինյանը նշել է, որ անցկացված միջոցառումները բազմաթիվ են: Դրանք անց են կացվել ինչպես ամբիոնների դասախոսների, այնպես էլ հրավիրված մասնագետների, ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի, պրոռեկտոր Վ. Յարամիշյանի, ռուս խաղաղապահների, համալսարանի և ֆակուլտետի ուսանողական խորհուրդների և ՈւԳԸ, ինչպես նաև ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի կողմից:

Նրա խոսքով՝ կազմակերպած բոլոր միջոցառումները ուղղված էին ուսանողներին պատերազմական թարմ մղձավանջային ապրումներից ու տպավորություններից դուրս բերելուն:

«Մեզ հաջողվեց ուսանողների մեջ հավատ ներշնչել Արցախի մայր բուհում սովորելու, շատերին՝ Արցախ վերադառնալու և ապագային հավատալու ուղղությամբ»,- իր ելույթում հավելել է Շ. Այդինյանը:

Մանկավարժության և սպորտի ֆակուլտետի 2020-2021 ուսումնական տարվա դեկանի կատարած աշխատանքը ներկաների կողմից գնահատվել է բավարար: